Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022 թվականի հունիսի 22-ից 26-ը

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1" Անունը, ազգանունը՝

Ռուստամ Բադասյան

2" Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3" Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, հունիսի 22-ից 26-ը

4" Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

5" Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության խորհրդի 139/140 նստաշրջանի ընթացքում ՀՀ ՊԵԿ պատվիրակությունը ներկա է գտնվել կոմիտեների ստանդարտ զեկույցների քննարկումներին, որոնք ենթակա են Խորհրդի հաստատմանը, քաղաքականության և կառավարման հարցերին, որոնք բխում են քաղաքականության հանձնաժողովի 86-րդ նիստից, թափուր պաշտոնների և տարածքային ներկայացուցչության ընտրություններին ու առաջադրումներին: Նստաշրջանին չմասնակցելու դեպքում հնարավորություն չէր ընձեռնվի համագործակցել ՀՄԿ անդամ պետությունների հետ, մասնակցել քննարկվելիք հարցերին, նաև ՀՀ ներկայացուցիչները չէին մասնակցի թափուր պաշտոնների և տարածքային ներկայացուցչության ընտրություններին ու առաջադրումներին:

6" Քննարկված թեմաները՝

ՀՄԿ տարեկան գլխավոր նստաշրջանի ընթացքում տեղի են ունեցել խորհրդի նախագահի, 6 տեղակալների ընտրության, աուդիտի, ֆինանսական կոմիտեների, քաղաքական հանձնաժողովի ղեկավար անձնակազմների և անդամների պաշտոնների հաստատման վերաբերյալ քննարկումներ:

Ներկայացվել են երեք կոմիտեների կատարած աշխատանքները, հաշվետվությունները:

7"Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումներ են տեղի ունեցել Հարավային Կորեայի Հանրապետության, Հնդկաստանի Հանրապետության մաքսային մարմինների ղեկավարների, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պատվիրակության ղեկավարի հետ: Հաշվետվությունների քննարկման ժամանակ բարձրացվել և կարևորվել է ինֆորմացիայի փոխանակման հարցը՝ մաքսային մարմինների միջև համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով:

8" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՀՄԿ տարեկան գլխավոր նստաշրջանի ընթացքում տեղի են ունեցել խորհրդի նախագահի, 6 տեղակալների ընտրությունները՝ ՀՄԿ 6 տարածաշրջաններից, աուդիտի, ֆինանսական կոմիտեների, քաղաքական հանձնաժողովի ղեկավար անձնակազմների և անդամների պաշտոնների հաստատում: Տեղի է ունեցել գլխավոր քարտուղարի տեղակալի ընտրություն, ընտրվել է Մեքսիկական Միացյալ Նահանգների թեկնածուն:

Ընդունվել են երեք կոմիտեների կատարած աշխատանքները, հաշվետվությունները: Հաստատվել են հաջորդ տարվա ծրագրերը:

9" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Երկրների մաքսային մարմինների ղեկավարների հետ հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ համագործակցության, փոխայցելությունների վերաբերյալ:

10" Ստորագրությունը, ամսաթիվը

6/28/2022

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

28.06.2022թ